Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԸՆԿԵՐ ՇԻՐ–ՋՐԱՆՑՔԸ[1]

Դեպի Շիր-ջրանցք:

Ամբողջ Լենինականը զարթնել է մի նորօրինակ ուխտագնացության համար, ջրի տոնախմբության պատրաստությամբ:

Արդեն բոլոր ավտոմոբիլներն ու կառքերը ճյուղազարդ, աշխուժացած պատրաստ են ճամփա ընկնելու Կապս-ջրանցք: Մի մասը գիշերն է մեկնել:

Հին Գյումրին դռների ճաղերը բացել՝ լցվել է մայթերը, մոմեղեն աբլաներ, հարգևոր հարս ու աղջկերք, բամբակե ծերուկներ աչքերը հառել են հախուռն հոսանքներին:

Փողոցները խրխնջում են, զրնգում, դոփում են: Հաչում են ավտոները, ճռնչում են սայլերը, և մեր ֆուրգոնը նրանց մեջ իր հազարավոր նոտաները ճռճռացնելով թխկթխկում է փողոցում: Մեր երկու կողմը հետևակ ընտանիքներ, բադի պես լնգլնգացող աբլաներ, բողչաները թևերն անցկացրած տանու աղջիկներ, ղարաչուխալի տղերք, Նանսենը[2], գյուղացիներ, քաղաքի գյուղացիներ, որ ինչ-որ մտադրություն ունեն, պատկոմներ, որբեր, ամերիկացի կանայք՝ տղամարդու զգեստներով ձիավորված, ռուս և հայ կարմիրբանակայիններ, և ոչ մի հոգևորական:

Բոլորը, իրար մեջ անցնելով, շտապում են դեպի ջուրը:

Կատարյալ արշավանք, տեղահանություն:

Ճամփան նախշած է խայտաճամուկ բազմության ժապավեններով: Անվերջ փնջեր, խայտաբղետ, հախուռն, որ միանում են, քանդվում, կորչում դաշտերի կանաչի մեջ:

Ծովի մեջ:

Շիրակի դաշտը ճխում է իր հազարավոր արտուտներով:Ծաղիկների բազմաթիվ խմբեր վառել են իրենց գունավոր մոմերն արտերի մեջ: Մեր հետևում ճախրում է արծաթփետուր արծիվը — Արագածը՝ թևերը լայն բացած դաշտի վրա: Մեր ձախ կողմը հորանջում է Արփաչայի ամայի ձորը: Տարօրինակ ժայռեր աչքի տակով մռայլ նայում են մեզ: Վարը, գետափին, դեղին ուրվականի պես մտորում է մամռաներկ Մարմաշենի վանքը: Եվ չորս կողմը, ձորի այն ափին ճամփաներ, թախծալի, հին, ամայի ճամփաներ:

Ու արևը դուրեկան գինու պես լցնում է մարմինդ իր աշխույժ հեղուկային եռանդը:

Ահա մեր հետևից կարկտեց հայկական էսկադրոնը և իր երկար նիզակներով երկինքը ծակծկելով անցավ առաջ:

Նոր ձիավորներ են գալիս հավասարվում և անցնում: Քաղաքի լոթիներից են: «Յորղա» ձիերին նստած՝ ահա նստած՝ ահա անփույթ կոտրտվում, օրորվում, մաղմղվում են— իբր թե չեն ուզում ձի նստել, իբր թե հենց այնպես, ի միջի այլոց մի բան:

Խայտաճամուկ գեղջկուհիները ծծկեր երեխաների բերանը ծիծը դրած՝ հիմնավոր նստվածքով ծանրացրել են սայլերը և հին ուխտավորներն են հիշեցնում:

Երբեմն ձիավորներ են մեզ դիմավորում ու հետ ու առաջ սլանում: Գավմիլիցիան է: Հսկում է դաշտին, բայց նա մենակ չէ: Ջրանցքի շեֆը—սահմանապահ ռուս զորամասի ձիավորները նույնպես ցրված են դաշտի վրա և խիստ հսկում են, որ արտերը չտրորվեն: Ահա նրանցից մինը, մի շատ երիտասարդ

տղա, հանդիմանում է մի խումբ ուրիշ երիտասարդների, որ կանաչ արտը կոխկրտելով ուզում են կարճ կտրել ճամփան:

— Ընկերնե՛ր, ընկերնե՛ր, ի՞նչ եք անում, չե՞ք տեսնում, որ փչացնում եք ժողովրդական բարիքը:

Հեռվում սև ամպի նշմարի պես օրորվում է Կապսը:

Մոտենում ենք: Ահագին համագումար սայլերի, ֆուրգոնների, ավտոմոբիլների: Բանվորների կացարանից այս կողմ իջևանն է: Բոլորը վեր են գալիս և ոտով շարունակում են ճամփան մինչև Ախուրյանի ձորը— ջրանցքի գլուխը:

Ահա կոմիսարներից մեկի «սայլը» — ավտոն փչացել է:Եզամոբիլների վրա նստածները ծիծաղում են ու անցնում: «Մեծ ու պստիկ չկա

»

— բոլորը հավասար են:

Ձորը վժժում է հազարավոր ամբոխով: Բոլորը կուտակվել են դիմացի ափին, ջրանցքի հանդեպ և սպասում են «բացման»:

Օրվա լեյտմոտիվը գյուղացիությունն է:

Հայ գյուղացիությունն իր ընտանիքով, շրջակա գյուղերից, հայ գյուղացիությունը կարմիրբանակայինի զգեստների մեջ, ռուս գյուղացիությունը սահմանապահ զորամասի մեջ: Կարմիր, կանաչ, կապույտ գույները փնջել են քար ու քարափը: Նրանց մեջ շերտ-շերտ անցնում է հինայի գույնը—զորքը:

Քարափի գլխին ուրիշ պատմություն է: Մրգավաճառներն սկսել են իրենց կոնցերտը:

— Քելե՛ք, քելե՛ք, քելեեե՛ք. . . պարպավ քերազը, քելե՛ք խիարի լավը. . . պահ, պահ, պահ, պա՛հ. . .

— Ջրին մաղարիչն է,— կտրում է ընկերը,— ջրին մաղարիչն է. . .

— Ջրերը, ջրերը, ջրերը. . . — կպցնում է երրորդը:

— Կապե՛կ, կապե՛կ, կապե՛կ, ծիրանը 10 կապեկ, ծիրանը 10 կապեկ,— ու ստացվում է երաժշտական ֆուգա:

Երկու աբլա ջրաղացքարի պես գլտորելով լնգլնգում են դեպի ձորը:

— Լավ կառավարութեն է, ժողովրդին լուսավորցուց:

Ու ընկնում են ձորը:

— Շի՛ր-կանալը մե՛րն է,

Լավ ապագան մերն է:

Գլուխները տաքացրած բանվորներ են, իրարու հետ ընկած երգում են ու գալիս դեպի ձորը:

Ահա թռան կոմիսարներից մեկի ավտոմոբիլի պատվանդանի վրա:

— Ուռռա՛ա՛ա՛. . . կեցցե՛ Շիրակի բանվորը:

Գնացին:

Արփաչայի վրա կախված է մի կամուրջ, կա մի ամբիոն, օրվա տոնի լոզունգով. «Շիր-կանալը խորհրդային իշխանության և բանվորական ու գյուղացիական մասսաների համագործակցության արդյունքն է»:

Լարվածությունը սաստկանում է Բանվորները փակել են պատնեշի և թունելի երկաթե արգելակները, և ահա ջուրն սկսում է հավաքվել ու բարձրանալ: Ահա թափվում է պատնեշի վրայից:

Ջուրը դարձրել է իր վրա ամենքի ուշքը: Կարծես դա մի նոր տարերք է, որին նոր են տեսնում: Ահա ոմանք շոշափում են նրան: Ահա ոմանք էլ հանվում ու մեջն են նետվում լողանալու: Ինչ-որ հեթանոսության, նոր հեթանոսության պատկերներ են օրորվում դիմացդ: Ջուրն այսօր պաշտամունքի առարկա է դառել: Ջուրն այսօր նոր դերի մեջ է: Ջուրն այսօր պաշտվում է, նրա տոնն է:

Թունելի բերանի մոտ են Լուկաշին[3], Համբարձումյան[4], Մախարաձե[5], Համիդ Սուլթանով[6], ՀՍԽՀ Ժողկոմխորհի անդամները, Խանոյան[7], ապա Նանսեն, Յարո և այլն:

Ամբողջ տոնակատարության մեջ սակայն, մի բան կա, դուրեկան և խորհրդավոր: Ի՞նչն է դա:

Տոնակատարությունը շատ է ուրախ ու սրտալի— ապացույց— այն պարը, զուռնան, պարկապզուկը, երգը, կատակն ու ձիարշավը: Ուրախ է գյուղացին, բանվորը, քաղաքացին, մտավորականը, մասնագետը, կառավարությունը, կոմունիստը, անկուսակցականը, ռուսը, հայը, օտարազգին. . . Բայց տոնը զարմանալի համեստ է—իր հերոսի՝ ջրի պես:

Այսօր Արփաչայի ջուրը խորհրդայնացավ: Նա փոխեց իր դարերի ռեժիմը, կենցաղը, բնույթը: Առաջ նա ձորերի մի ռոմանտիկ ճամփորդ էր: Փերիներ էր պահում իր հեքիաթական ծոցում: Առաջ նա մի լոթի էր, չէր աշխատում, միայն քեֆ էր անում:

Գիշերները զգվում էր լուսնի արծաթե ուրվականը, ցերեկը խաղում արևի ու ամպերի հետ:

Առաջ նա բանաստեղծ էր: Երազալից ու անհոգ պատանի, երգելով գնում էր: Ո՛ւր: Ինքն էլ չգիտեր: Ապագան չի մտածել, անցյալը մոռացել է: Անգիտակից տարերք, որ երբեմն ուռչում, լցվում, փոխվում էր կատաղի երիվարների մի սանձակոծ ջոկի բաշախռիվ թռչում ձորերն ի վար, զարկում սմբակները քարերին, գլորում, քշում հետը, քանդում ջրաղացներն ու սրբում արտերը: Նա մի ֆենիքս[8] էր, վտանգավոր ֆենիքս: Եվ մինչ Շիրակիտերը չորանում էին, նա անառակ որդու պես վատնում էր իր կյանքն ամայի ձորերում: Նա մի բանդիտ էր:

Եվ ահա մի օր էլ ամբարտակը առաջը կանգնեցրին:

Ո՞ւր: Կանգնի՛ր:

Փորեցին թունելը և դրին մի արգելակ:

Եվ ահա ահագին բազմությունը եկել բռնել է նրան: Բաց են անում թունելը:

— Համեցեք:

— Չէ, չէ:

— Ի՞նչ «չէ չէ»: «Չէ չէ»

չկա: Ցալլա՛: Մա՛րշ: Հերի՛ք ինչքան պարապ-սարապ բոլթա տվիր—գնա՛ աշխատիր:

Ու մղեցին թունելի մեջ:

Ջուրը նեղսրտեց, ընդդիմացավ, ուզեց փախչել:

Ախր նեղ է ճամփան, ախր. . .

— Գնա, էլ ի՞նչ ախր. . .

Ու ջուրը գնաց: Ու երբ տունելից դուրս եկավ դաշտ՝ վրան՝ ծիծաղեցին: Փոշոտ, փրփրոտ, անվարժ անցավ դաշտը, հը՛, Արփաչայն աշխատի:

Ո՞վ էր տեսել որ. . .

— Գնա՛:

Ու գնաց Արփաչայը: Աշխատանքն սկսվեց: Նա արդեն դրվեց պրոֆմիության մեջ, անցավ ապահովագրության դրամարկղ, 17 կատեգորիա: Ու երեկվա գդակը ծուռ, լոթիների հետ իր քեֆին ման եկող, ուտող, խմող, բոշբողազություն անող, բանաստեղծ Արփաչայը «ծո, այ օղուլը» այսօր դառավ ընկեր Շիր-Լեն-ջրանցք: Նա մի պատի լրագիր է կարդալու: Նա խոսելու է խրճիթ-ընթերցարանում: Նա պիտի բանի հիդրոէլեկտրակայանում, նա հիմի պիտի զբաղվի գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայով:

— Ընկեր Լեն-Շիր-ջրանցք, ի՞նչ կա լրագրերում:

— Անգլիական կապիտալը դավեր է լարում Չինաստանում:

Այո, այսօրվանից այդպես է ընկեր Լեն-Շիր-ջրանցքը:

Եվ նայում ես Արփաչայի ձորին: Գետի հունը ցամաքել է: Կարծեմ առաջին անգամն այն օրից, երբ բնությունը շինեց այս ձորը: Չորացավ ջրի հին դաշտը: Այնտեղ վերջացավ հինԱրփաչայը, հին կյանքը, նա շուռ եկավ դեպի ձախ ու սկսվեց նոր կյանք: Ինտենսիֆիկացիա, ինդուստրիա, էլեկտրիֆիկացիա, սոցիալիզմ. . .

***

Լավ է ամբոխը, երբ ազատ է:

Քարաշեն մի սենյակ, հողե հատակով, երկու դուռ, բավական մութ—բանվորների ճաշարանը: Այսօր մի Մուկուչ խմիչք ու մթերք է ծախում այցելուներին: Ներսից մի ջախջախված, խանձված ձայն է գալիս քյամանի խարխուլ տզվզոցի հետ: Ավելի ճիշտը սայլի ճռնչոց:

Այստեղ մի Հոմերոս կա: Այստեղ է հորինվում ժողովրդական էպոսը:

Մտնում ենք ներս: Երկար սեղանի մոտ նստած են մի քանի հոգի, որոնց ինքնուրույնությունը ճանաչելը որոշ դժվարություն է ընձեռում: Բայց նրանց կողքին նստած է մի աշուղ: Լավ թրջված են նրանք և աշուղը, ուստի, երբ գնում նստում ենք նրանց դիմաց՝ ծանոթության մի էլեկտրական հոսանք է անցնում նրանց մեջ և սպառնում կոնտակտի: Աշուղն ուղիղ դիմացս է: Նա ոգևորված է գինուց, ջրից, օդից և իր կողքի բարեկամների ավյունից: Երգում է և քյամանին թակում: Սեղանատան հյուրերն ունկնդրում են նրան: Բայց այդ քիչ է, հասկանում են նրա խոսքերը, այդ էլ քիչ է. զվարճանում են, և որովհետև այդ էլ քիչ է՝ աշուղը գոռում է, շեշտավոր տեղերում ոտը զարկում գետնին, արմունկով բոթում կողքի նստածներին ու մաղվում, փշրվում, կոտրատվում:

— Իմ սիրեկանին ասեք, որ ես այստեղ եեեե՛մ, ես մի վառված սիրահար եեեե՛մ (ու բոթում է կողքինին): Գևորգ ի՞նչդ էր:

— Լավ էր, սան յաղշի,— մրթմրթում է Գևորգը:

Աշուղը ձայնն ավելի է զլում:

— Գիշեր-ցերեկ դադար չունիիիիի՛մ:

(Մուկուչ):

Մուկուչը «հը» է անում և լիմոնադի շիշը դնում է մեր առջև:

— Լավ ականջ էրե, Մուկուչ: «Գիշեր-ցերեկ դադար չունիմ»: «Քո տեսության կարոտում եմ. . . »:

(Իմացա՞ր, Մուկուչ):

Մուկուչը լիմոնադն իմ առջև դնելիս նկատել է, սակայն, իմ անզգույշ բլոկնոտը սեղանի տակին և ահա փսփսում է աշուղի ականջին: Սա ինձ է նայում:

— Տղեք ջան, ներողություն: Գեղացի եմ, թաք քյամանով:— Դադարում է, վերցնում գինու բաժակը և ինձ դառնում:

— Եղբայր ջան, այսինքն ներողություն: Սրտով մուրազով կուզեմ իմանամ թե դու ո՞վ ես:

— Նշան չէ, ուստա, քու երգդ երգե:

— Չէ՛, ինձ համար մեծ ցանկություն է իմանամ, թե այսինքն դու ո՞վ ես անձամբ:

— Հասարակ, ամենքի պես մարդ, ուստա:

— Չէ՛, հեչ ադաթ-չէ: Չիմացած չեմ կրնա: Դու նշանով մարդըմ կերևաս:

— Սխալ ես:

Գևորգը մեջ է մտնում և տեղից վեր կենալով աջ ձեռը մոտեցնում է քթիս:

— Գևորգ Ալոյան:

— Դերենիկ Դեմիրճյան:

— Տեսա՞ր,— դառնում է աշուղին:

Սա գոհ է այլևս: Շարունակում է տզվզոցը:

Գևորգը կախվում է նրա ականջին:

— Եղափոխություն ըսե, եղափոխություն:

Աշուղն արդեն պատրաստ էր: Ու զլում է.

«Աղեքսանդր Մյասնիկյանը մեզնեն

թռաա՛ավ. . .

Ափսո՞ս. . .

(Ափսոս է, չէ՞, Մուկո՞ւչ)

Մեր սրտերը հետը տարավ.

Եթե Լենինը նրան տեսներ,

Շքանշան պատիվ կը տար,

Վառեցին շները, հողը տվին գլխներիս.

Աղեքսանդրը նրա հետ ճարտար:

Ափսոս էր, ափսո՛ս, ափսո՛ս. . . »:

Երգը խորանում է, աշուղը տաքանում, բոթում է Գևորգին, գլուխը ցնցում ու— Երնե՛կ Լուկաշինը էստեղ էղնե՛ր. . .

(Մուկուչ),

— Հը՛:

— Ասում եմ՝

Երնեկ Լուկաշինը էստեղ էղնե՛ր. . .

— Էս ջրիցը խաբար առնե՛ր:

— Հա՛յ ջան, հայ ջա՛ն, ուստա:

«Ուստան» ընկնում է էքստազի մեջ ու ածիլած կզակն օդի մեջ կափկափելով գոռում է առաջի վանկը.

— Դուք ինձ ասեք Համբարձումյանը պիտի գաաա՞,

(Մուկուչ),

— Հը՛:

— Ջրանցքին տեր տիրական պիտի գաաա՞

(ու բոթում է Գևորգին):

Ապա աղեղի ծայրով ծակում է հեռու նստած մեկին.

— Ժողովրդի սիրեցյալը պիտի գաաա՛ (տղեք ջան, վերջը տեսեք, վերջը) «ջրանցք եք դուք», Համբարձումյան, Լուկաշին:

— Մուկուչ:

— Հը՛:

— Մուկո՛ւչ, հազա՛, հազա՛.

— Լենինն եկավ աշխարք տիրեց.

Առաջ գեղեցիկին սիրեց:

— Ինչպե՞ս: Ի՞նչ. . .

Բայց այն մթնոլորտի, այն ունկնդիրների և այն իմպրովիզատոր աշուղի համար տարօրինակ չէ դա: Լենինը կտրիճ է, տղամարդ. նա կռվում է, տիրում ու սիրում: Ժողովրդի երգերը այդպես է պատկերացնում, մեզնից հարցնելու կարիք չի զգում:

Այստեղ, Շիրակի դաշտում, ժողովրդի մեջ ստեղծվում, հորինվում է իր սպեցիֆիկ ձևերով էպոսը: Երևի սկիզբ է առնում ժամանակի դյուցազներգությունը: Ի՞նչ գործ ունենք խառնվելու ժողովրդի ստեղծագործության մեջ:

Նա փող չէր հավաքում: «Գեղացի էր, թաք քյամանով», եկել էր քեֆ անելու:

Շնորհակալություն հայտնեցինք «բոզդովանցի երգիչ թաք քյամանով գյուղացուն» և դուրս եկանք ճաշարանից:

Արդեն օրը թեքվում է: Ջուրը ճամփա է ընկել դեպի Շիրակի դաշտը: Մենք էլ գնում ենք նրա հետ: Հիմա էլ սայլերի, ավտոների ու կառքերի շարանը ջրանցքի ճամփով է գնում:

Առուն լցված է և ջուրը, կուլտուրական ջուրը հպարտ ու լուրջ գնում է դեպի դաշտը: Ահա ճերմակազգեստ որբերի շարաններ, որ առվի երկու ափի թմբերով ուղեկցում են ջրին: Ի՞նչ են մտածում այդ որբերը: Ահա ֆուրգոններով ռուս կարմիրբանակայիններ՝ երգելով գնում են նույն

ընթացքով: Ինչո՞ւ են երգում նրանք: Ահա գեղջկուհիները, որ թեյամաններով ջուր են վերցնում ջրանցքից և ջրում իրենց արտերը:

Շարան շարքերը գնում են մինչև շոսսե և այնտեղից ծռվում դեպի Պոլիգոն, որբանոցի առջևի հրապարակը, ուր ամբիոն է դրած ճառերի համար: Ամբողջ կառավարությունն այնտեղ է, բայց ոչ ոք ճառի պահանջ չի զգում:

— Թող ջուրը ճառի:

Ու խառնված ժողովրդի հետ գյուղացիները, որբերի, կարմիրբանակայինների, բանվորների և այլ բազմության հետ ասում-խոսում էին, թարմանում բուֆետի մոտ, հանգստանում, ապա և կամաց-կամաց ճամփա ընկնում դեպի քաղաք:

Շիրակի համար սկսվեց նոր դարագլուխ:

ԸՆԿԵՐ ՇԻՐ–ՁՐԱՆՑՔԸ

(Էջ 27)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1925, № 159: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Շիրակի ջրանցքի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1925 թ. հունիսի 21-ին:

2 Նանսեն Ֆրիտյոֆ (1861—1930) — նորվեգացի նշանավոր գիտնական-ճանապարհորդ: Ազգերի լիգային կից աշխատանքի միջազգային բյուրոյի հանձնաժողովի ղեկավար, հայ ժողովրդի բարեկամ: Ազգերի լիգայի որոշմամբ Նանսենի ղեկավարությամբ հանձնաժողով է ուղարկվում Սովետական Հայաստան՝ ուսումնասիրելու հայ գաղթականներին Հայաստանում բնակեցնելու հնարավորությունները: Նանսենի գլխավորած հանձնաժողովը Երևան է ժամանել 1925 թ. հունիսի 18-ին: Նանսենը հունիսի 21-ին մասնակցել է Շիրակի ջրանցքի բացմանը:

3 Լուկաշին (Սարգիս Սրապիոնյան, 1885—1939) — կուսակցական և սովետական ականավոր գործիչ: Սովետական Հայաստանի կառավարության առաջին կազմի ժողկոմխորհի նախագահ:

4 Համբարձումյան Սաքո (1870—1944) — կուսակցական և սովետական ականավոր գործիչ: Սովետական Հայաստանի կառավարության առաջին կազմի առողջապահության ժողկոմ, ապա ժողկոմխորհի նախագահ:

5 Մախարաձե Ֆիլիպ Իեսեևիչ (1868—1941) — սովետական պետական ականավոր գործիչ, Վրացական ՍՍՀ հեղկոմի (1921), ապա ԺԿԽ-ի նախագահ, այնուհետև Վրացական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահ:

6 Սուլթանով Համիդ Հասան–օղլի (1889—1938) — հին բոլշևիկ, Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման ակտիվ մասնակից: Եղել է Ադր. ՍՍՀ ներքին գործերի ժողկոմ:

7 Խանոյան Սարգիս (1877—1937)— կուսակցական-պետական գործիչ, Սովետական Հայաստանի կառավարության առաջին կազմի ֆինանսների ժողկոմ:

8 Ֆենիքս — դիցաբանական թռչուն վերածնված իր սեփական մոխրից. փյունիկ: